է մեզանից. մի քանդուած կամուրջ մենք ենք բոլորս՝ յաւիտեան»:

Բոսնիացի գաղթականների հոգեբանական իրավիճակը վերլուծելով, Սթիվըն Ուէյնը համոզուած է, որ համայնքի կործանումը, մանաւանդ՝ երբ երկու իրար հետ համերաշխ ապրած եւ այդ համերաշխութեամբը հպարտացած ժողովուրդների մէջ ծագած թշնամութեան հետեւանքով է դա տեղի ունենում, վերապրողներին դատապարտում է անորոշ ու անհեռանկար իրավիճակի: Նրանցից խլում է յստակ ինքնութեան ու պատկանելիութեան զգացումը: Այս իրողութեան զուգահեռը առկայ է հայ վերապրողների մէջ, ի հարկէ, այն տարբերութեամբ, որ համերաշխ համակեցութեան հասկացողութիւնը հայեւթուրք յարաբերութիւններում պայմանաւորուել է հայի հնազանդութեամբ, համբերատարութեամբ եւ հաւատարմութեամբ (*milleti sadık*): Հաւասարակշռութիւնը խախտուելուն պէս՝ պատժուել է հայը… Բայց նաեւ պիտի յիշել, որ քրիստոնեայ Սերբերի եւ իսլամ բոսնիացիների պարագային եւս այդպիսի բացարձակօրէն խաղաղ համակեցութիւն չի եղել:

Հայ համայնքների կործանումը Օսմանեան Թուրքիայում, այնտեղ մնացած հայ վերապրող խլեակներին զրկեց ազգային ինքնութեան եւ հայրենիքի պատկանելիութեան զգացումից: Նրանց մատնեց լռութեան եւ մի տառապագին փնտռտուքի՝ կեանքի նոր իմաստ գտնելու, գտնելու մի մարդկային ինքնութիւն, որ թուրքին հանդուրժելի լինի ու նրա ազգային (ազգայնամոլ) գիտակցութիւնը չվիրաւորի:

Տառապանքը շարունակւում է…